# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան
համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան
1փող.թիվ 2, Հեռ. (094) 519030 ,
hatsavan.kotayk@mta.gov.am

N 189
*06 սեպտեմբեր 2019թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2019թվականի օգոստոսի 30-ի թիվ 38-Ա որոշումը:

Առդիր՝ **1** թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ./093-212366/*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 38-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՌՆԻ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԸ, ԾԱԾԿՈՑԸ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով,որ Կոտայքի մարզի Հացավան համայնքի Գառնի խճուղի թիվ 4 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 0.04000 հա էներգետիկայի,կապի,տրանսպորտի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության հողամասի վրա քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին,չի խախտում այլ անձանց իրավունքները,օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 18.05.2006թ. N731-Ն որոշման,ՀՀ Կառավարության 18.05.2006թ.N912-Ն որոշման,ՀՀ Կառավարության 29.12.2005թ.N2387-Ն որոշման 48-րդ կետի պահանջներով՝

***որոշում եմ***

1. Կոտայքի մարզի Հացավան համայնքի Գառնի խճուղի թիվ 4 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 0.04000 հա էներգետիկայի,կապի տրանսպորտի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների,կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նաշանակության հողամասի վրա իրքնակամ կառուցված պոմպակայանը 26.48քմ,ծածկոցը 17.61քմ և աստիճանավանդակը 1.28քմ մակերեսներով ճանաչել օրինական որպես Հացավան համայնքի սեփականություն:
2. Դիմել ՀՀ ԱԳ ԿԿ տարածքային ստորաբաժանում կատարելու նշված գույքի պետական գրանցում:
3. Գրավոր առաջարկություն անել ինքնակամ շինությունն իրականացրած անձ Սարգիս Մուշեղի Սարգսյանին օրինականացված կառույցները 0.04000 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով գնելու համար:
4. Հացավան համայնքի վարչական տարածքում գտնվող 07-041-0105- ծածկագրով 0.04000 հա հողամասին տրամադրել Կոտայքի մարզ Հացավան համայնք Գառնի խճուղի թիվ 4 հասցեն:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ավարդ Խաչատրյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2019թ. Օգոստոսի 30
գ.Հացավան